ՔՄՖ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ

ICF Armenia Chapter

ՔՄՖ Էթիկայի կանոններն արտացոլում են ՔՄՖ առանցքային արժեքները, էթիկական սկզբունքները և վարվեցողության էթիկական չափանիշները ՔՄՖ բոլոր մասնագետների համար:

Էթիկայի սույն կանոններն ամփոփված են 5 հիմնական բաժիններում.

1. Ներածություն
2. Հիմնական հասկացություններ
3. ՔՄՖ առանցքային արժեքներ և էթիկական սկզբունքներ
4. Էթիկայի չափանիշներ
5. Երդում

1. Ներածություն

ՔՄՖ Էթիկայի կանոններն արտացոլում են Քոուչինգի միջազգային ֆեդերացիայի առանցքային արժեքները (ՔՄՖ առանցքային արժեքներ), էթիկական սկզբունքները և վարվեցողության էթիկական չափանիշները ՔՄՖ բոլոր մասնագետների համար (տե՛ս «Հիմնական հասկացություններ» բաժինը): ՔՄՖ Էթիկայի չափանիշներին հետևելը ՔՄՖ առանցքային կարողունակություններից առաջինն է. «Ցուցաբերում է էթիկական մոտեցում. հասկանում և հետևողականորեն կիրառում է քոուչինգի էթիկայի կանոններն ու չափանիշները»:

ՔՄՖ Էթիկայի կանոնները նպաստում են Քոուչինգի միջազգային ֆեդերացիայի և ընդհանուր առմամբ՝ քոուչինգի մասնագիտության ամբողջականության պահպանմանը՝

- սահմանելով ՔՄՖ առանցքային արժեքներին և էթիկական սկզբունքներին համապատասխան վարվեցողության չափանիշներ,
- ուղղորդելով էթիկայի կանոններին համապատասխան ինքնանդրադարձ վերլուծությունը, կրթությունը և որոշումների կայացումը,
- ՔՄՖ էթիկայի կանոնների խախտումների ուսումնասիրման գործընթացում օգնելով վճիռների կայացմանը և պահպանելով ՔՄՖ քոուչինգային չափանիշները,
- ստեղծելով հիմք ՔՄՖ հավատարմագրված ծրագրերում ՔՄՖ էթիկայի կանոնների ուսուցման համար:

ՔՄՖ Էթիկայի կանոնները կիրառվում են, երբ ՔՄՖ մասնագետները ցանկացած տեսակի քոուչինգային փոխգործակցության ժամանակ հանդես են գալիս որպես որպես քոուչ՝ անկախ քոուչինգային հարաբերության (տե՛ս սահմանումը) հաստատումից: Սույն Էթիկայի կանոնները սահմանում են որպես քոուչ, քոուչ-սուպերվիզոր, մենթոր-քոուչ, ուսուցանող կամ վերապատրաստում անցնող ուսանող քոուչ կամ ՔՄՖ ղեկավարությունում, ինչպես նաև աջակցող անձնակազմում (տե՛ս սահմանումները) տարբեր դերեր ստանձնած ՔՄՖ մասնագետների էթիկական պարտավորությունները:

Թեև ՔՄՖ էթիկայի կանոնների խախտումների ուսումնասիրման գործընթացը, ինչպես և «Երդումը», կիրառելի են միայն ՔՄՖ մասնագետների համար, ՔՄՖ անձնակազմը նույնպես պարտավոր է հավատարիմ մնալ Էթիկայի կանոններին, առանցքային արժեքներին և էթիկական սկզբունքներին, որոնք հիմք են հանդիսանում սույն ՔՄՖ Էթիկայի կանոնների համար:

Էթիկայի տեսանկյունից գրագետ աշխատելու մարտահրավերը ենթադրում է, որ ՔՄՖ անդամներն անխուսափելիորեն բախվելու են անկանխատեսելի հարցերի պատասխաններ, դժվար կացության հաղթահարում կամ խնդիրների լուծումներ պահանջող իրավիճակների: Սույն Էթիկայի կանոնների նպատակն է աջակցել Էթիկայի կանոններին ենթակա անձանց՝ օգնելով նրանց ըմբռնել տարբեր էթիկական գործոնները հաշվի առնելու անհրաժեշտությունը և էթիկական վարքի այլընտրանքային ուղիները:

Էթիկայի կանոններն ընդունող ՔՄՖ մասնագետները ձգտում են էթիկապես գրագետ գործել նույնիսկ այն դեպքում, երբ դա պահանջում է դժվար որոշումների կայացում կամ խիզախ գործելակերպ:

2. Հիմնական հասկացություններ

Հաճախորդ. քոուչինգ անցնող անձ կամ թիմ/խումբ, մենթորինգի, սուպերվիզիայի կամ դասընթացի մասնակից կամ ուսումնառող քոուչ:

Քոուչինգ. համագործակցություն հաճախորդների հետ՝ ոգեշնչելու նրանց մտածական և ստեղծագործական գործընթացի միջոցով առավելագույնի հասցնել անձնային և մասնագիտական ներուժը:

Քոուչինգային հարաբերություն. հարաբերություն ՔՄՖ մասնագետի և հաճախորդ(ներ)ի/հովանավոր(ներ)ի միջև, որը հաստատվում է յուրաքանչյուր կողմի պատասխանատվությունը և ակնկալիքները սահմանող համաձայնագրով կամ պայմանագրով:

Կանոններ. ՔՄՖ էթիկայի կանոններ

Գաղտնիություն. քոուչինգային գործընթացում ներգրավված լինելու արդյունքում ստացվող ցանկացած տեղեկության պաշտպանություն, եթե տվյալ տեղեկությունը բացահայտելու համաձայնություն առկա չէ:

Շահերի բախում. իրավիճակ, որում ՔՄՖ մասնագետը գտնվում է ֆինանսական, անձնային կամ այլ շահերի կիզակետում, երբ մի շահին սպասարկելը կարող է հակասել մյուսին կամ բախում առաջացնել մյուսի հետ:

Հավասարություն. իրավիճակ, որում բոլոր մարդիկ, անկախ ռասայական, էթնիկ, ազգային պատկանելությունից, մաշկի գույնից, սեռից, սեռական կողմնորոշումից, գենդերային ինքնությունից, տարիքից, կրոնից, ներգաղթյալի կարգավիճակից, հոգեկան կամ ֆիզիկական առանձնահատուկ կարիքներից և մարդկանց այլ տեսակի առանձնահատկություններից, համընդհանուր ներառված են, օգտվում են ռեսուրսների և հնարավորությունների հասանելիությունից:

ՔՄՖ մասնագետ. անձինք, որոնք ներկայանալով որպես ՔՄՖ անդամ, ՔՄՖ որակավորում ունեցող մասնագետ՝ հանդես են գալիս քոուչի, քոուչ-սուպերվիզորի, քոուչ-մենթորի, քոուչ-ուսուցանողի, ուսումնառող քոուչի դերերում՝ չսահմանափակվելով այդ դերերով:

ՔՄՖ աշխատակազմ. ՔՄՖ-ին աջակցող անձնակազմ, որը պայմանագրային հիմունքներով վարձվում է կառավարող ընկերության կողմից՝ ՔՄՖ-ի անունից կառավարման և վարչարարական մասնագիտական ծառայություններ մատուցելու նպատակով:

Կազմակերպության քոուչ. կազմակերպության ներսում լրիվ կամ կես դրույքով աշխատող անձ, որը տվյալ կազմակերպության աշխատակիցներին տրամադրում է քոուչինգային ծառայություններ:

Հովանավոր. կազմակերպություն (ներառյալ նրա ներկայացուցիչները), որը վճարում և (կամ) կազմակերպում կամ սահմանում է մատուցվելիք քոուչինգային ծառայությունները:

Աջակցող անձնակազմ. մարդիկ, որոնք աշխատում են ՔՄՖ մասնագետների համար՝ նրանց հաճախորդներին աջակցելու նպատակով:

Համակարգային հավասարություն. համայնքների, կազմակերպությունների, ազգերի և հասարակության էթիկական կանոններով, առանցքային արժեքներով, քաղաքականություններով, կառուցվածքներով և մշակույթով սահմանված գենդերային ռասայական կամ այլ տեսակի հավասարություն:

3. ՔՄՖ առանցքային արժեքները և էթիկական սկզբունքները

ՔՄՖ Էթիկայի կանոնների հիմքում ՔՄՖ առանցքային արժեքներն ու դրանցից բխող գործողություններ են: Բոլոր արժեքները հավասարաչափ կարևոր են, փոխլրացնող և մոտիվացնող, որոնք պետք է կիրառվեն էթիկական չափանիշների ընկալման և մեկնաբանման նպատակով: ՔՄՖ բոլոր մասնագետներից ակնկալվում է լինել այդ արժեքների կրողը և կիրառել դրանք բոլոր փոխհարաբերություններում:

4. Էթիկական չափանիշներ

ՔՄՖ մասնագետները գործունեության ընթացքում հետևում են ստորև ներկայացված էթիկական չափանիշներին.

<u>Բաժին I. Պատասխանատվություն հաճախորդների նկատմամբ</u>

Որպես ՔՄՖ մասնագետ ես՝

1. Բացատրում և համոզվում եմ, որ նախնական հանդիպումից առաջ կամ դրա ընթացքում քոուչինգի իմ հաճախորդ(ներ)ը և հովանավոր(ներ)ը հասկացել են քոուչինգի բնույթն ու պոտենցիալ արժեքը, գաղտնիության էությունը և սահմանները, ֆինանսական հարցերը և քոուչինգային պայմանագրի մյուս բոլոր պայմանները:
2. Նախքան ծառայությունների մատուցումը կազմում եմ համաձայնագիր/պայմանագիր՝ նշելով իմ հաճախորդ(ներ)ի և հովնավոր(ներ)ի հետ կապ ունեցող բոլոր կողմերի դերերը, պարտականությունները և իրավունքները:
3. Բոլոր կողմերի հետ պահպանում եմ գաղտնիություն խստագույն մակարդակով՝ ըստ նախնական պայմանավորվածության: Ես քաջատեղյակ եմ անձնական տվյալների և շփումների մասին բոլոր կիրառելի օրենքներին և համաձայն եմ կատարել դրանց պահանջները:
4. Ունեմ հստակ ընկալում, թե քոուչինգային փոխհարաբերությունների ժամանակ ինչպես է տեղի ունենում տեղեկությունների փոխանակումը բոլոր ներգրավված կողմերի միջև:
5. Իրազեկում եմ ինչպես հաճախորդ(ներ)ին, այնպես էլ հովանավոր(ներ)ին կամ շահագրգիռ կողմերին այն պայմանների մասին, որոնց առկայության դեպքում տեղեկությունը չի պահվի գաղտնի (օրինակ՝ օրենքով պահանջվող դեպքերում դատարանի գործող կարգադրությամբ կամ ծանուցմամբ հաստատված ապօրինի գործունեություն, սեփական անձին կամ այլոց սպառնացող կամ հավանական վտանգ

և այլն): Եթե ես ողջամտորեն գտնեմ, որ առկա է վերոնշյալ հանգամանքներից որևէ մեկը, ինձնից գուցե պահանջվի տեղեկություն տրամադրել պատկան մարմիններին:

6. Լինելով կազմակերպության քոուչ՝ կառավարում եմ իմ հաճախորդ(ներ)ի և հովանավոր(ներ)ի հետ գոյություն ունեցող կամ հավանական շահերի բախումները՝ քոուչինգային համաձայնություն(ներ)ի և ընթացիկ երկխոսությունների միջոցով: Դա պետք է ներառի կազմակերպության ներսում դերերի, պատասխանատվությունների, հարաբերությունների հստակեցումը, տեղեկությունների գրանցման, գաղտնիության պահպանման և զեկուցման այլ պահանջների ապահովումը:
7. Պահպանում, պահում և հեռացնում եմ բոլոր գրանցված տեղեկությունները, այդ թվում՝ իմ մասնագիտական շփումների ընթացքում ստեղծված էլեկտրոնային ֆայլերը և հաղորդակցումները՝ այն եղանակով, որն ապահովում է գաղտնիություն, անվտանգություն և անձնական տվյալների պաշտպանություն, ինչպես նաև համապատասխանում է գործող օրենքների և պայմանագրերի պահանջներին: Բացի այդ, ես ձգտում եմ պատշաճ կերպով օգտագործել քոուչինգային ծառայությունների ոլորտում կիրառվող նորահայտ և զարգացող տեխնոլոգիական մշակումները (տեխնոլոգիական օժանդակությամբ քոուչինգային ծառայություններ) և իրազեկված լինել, թե տարբեր էթիկական չափանիշներն ինչ կիրառելիություն ունեն դրանց նկատմամբ:
8. Զգոն եմ այն ամենի նկատմամբ, ինչը մատնանշում է, որ գուցե քոուչինգային հարաբերության արդյունքում ձեռք բերված արժեքի փոփոխություն կա: Նման դեպքում փոփոխություն եմ մտցնում հարաբերության մեջ կամ հաճախորդ(ներ)ին / հովանավոր(ներ)ին հորդորում եմ փնտրել մեկ այլ քոուչ, մեկ այլ մասնագետ կամ օգտագործել այլ ռեսուրս:
9. Հարգում եմ քոուչինգային գործընթացում քոուչինգային հարաբերությունը ցանկացած պահի ցանկացած պատճառով դադարեցնելու բոլոր կողմերի իրավունքը, ինչը պետք է համապատասխանի պայմանագրի դրույթներով սահմանված կարգին:
10. Զգայուն եմ նույն հաճախորդ(ներ)ի և հովանավոր(ներ)ի հետ միաժամանակ տարբեր պայմանագրեր և հարաբերություններ ունենալուց բխող հետևանքների նկատմամբ, որպեսզի խուսափեմ շահերի բախում առաջացնող իրավիճակներից:
11. Տեղյակ եմ՝ ինչպես ակտիվորեն կառավարել իմ և հաճախորդի միջև մշակութային, փոխհարաբերությունների, հոգեբանական կամ համատեքստային հիմնախնդիրներից բխող դիրքային կամ կարգավիճակային ցանկացած տարբերություն:
12. Իմ հաճախորդներին տեղեկացնում եմ, որ ես գուցե վճարվեմ կամ այլ օգուտներ ստանամ նրանց երրորդ կողմերի մոտ ուղղորդելու համար:
13. Ապահովում եմ քոուչինգային ծառայության հաստատուն որակ՝ անկախ ցանկացած քոուչինգային հարաբերության համար համաձայնեցրած վարձատրության չափից և ձևից:

<u>Բաժին II. Ինքնակատարելագործման և արդյունավետության բարձրացման պատասխանատվություն</u>

Որպես ՔՄՖ մասնագետ ես՝

14. Պահպանում եմ ՔՄՖ Էթիկայի կանոններն իմ բոլոր շփումներում: Իմ կողմից էթիկայի կանոնների հնարավոր խախտման մասին տեղեկանալու կամ մեկ այլ ՔՄՖ մասնագետի կողմից ոչ էթիկական պահվածք նկատելու դեպքում խնդրի մասին հարգալից կերպով բարձրաձայնում եմ կողմերին: Եթե դա չի լուծում խնդիրը, դիմում եմ որևէ պաշտոնական մարմնի (օր.՝ ՔՄՖ աշխատակազմը):

15. Պահանջում եմ, որ Աջակցող անձնակազմի բոլոր անդամները հետևեն ՔՄՖ Էթիկայի կանոններին:

16. Ձգտում եմ գերազանցության՝ անդադար ինքնակրթվելու, մասնագիտական կարողությունները կատարելագործելու և էթիկական պահվածք զարգացնելու միջոցով:

17. Ճանաչում եմ իմ անձնական սահմանները կամ այն հանգամանքները, որոնք կարող են հակասել, խանգարել կամ բացասաբար ազդել իմ քոուչինգային գործունեության կամ իմ պրոֆեսիոնալ քոուչինգային հարաբերությունների վրա: Վերը նշված հանգամանքների առկայության պարագայում կդիմեմ աջակցության՝ որոշելու իմ կողմից ձեռնարկվող գործողությունը և ըստ անհրաժեշտության՝ անմիջապես կձգտեմ ստանալ համապատասխան մասնագիտական ուղղորդում: Դա գուցե հանգեցնի քոուչինգային հարաբերության (հարաբերությունների) ընդհատման կամ դադարեցման:

18. Հաղթահարում եմ ծագած կամ հավանական շահերի բախումը՝ խնդրի լուծման ուղղությամբ աշխատելով համապատասխան կողմերի հետ, դիմելով մասնագիտական օգնության, ինչպես նաև ժամանակավորապես ընդհատելով կամ ավարտելով մասնագիտական հարաբերությունը:

19. Պահպանում եմ ՔՄՖ անդամների տվյալների գաղտնիությունը և օգտագործում եմ ՔՄՖ անդամների կոնտակտային տվյալները (էլ. փոստի հասցեներ, հեռախոսահամարներ և այլն) միայն ՔՄՖ կողմից սահմանված կարգով և ՔՄՖ անդամների համապատասխան թույլտվությամբ:

Բաժին III. Առավելագույն պրոֆեսիոնալիզմ դրսևորելու պատասխանատվություն

Որպես ՔՄՖ մասնագետ ես՝

20. Ճշգրտորեն եմ ներկայացնում որպես քոուչ իմ որակավորումները, կարողությունների մակարդակը, փորձագիտական գործունեությունը, ձեռք բերած փորձը, վերապատրաստումները, առկա հավաստագրերը և ՔՄՖ որակավորումները:

21. Գրավոր և բանավոր կերպով ներկայացնում եմ ճշգրիտ և հավաստի տեղեկություններ որպես ՔՄՖ մասնագետ իմ և ՔՄՖ կողմից առաջարկվող ծառայությունների, քոուչինգի՝ որպես մասնագիտության և նրա ապահոված պոտենցիալ արժեքի վերաբերյալ:

22. Հաղորդակցվում եմ, ինչպես նաև իրազեկում եմ այն մարդկանց, որոնք պետք է տեղեկացված լինեն սույն Էթիկայի կանոններով սահմանված էթիկական պատասխանատվության մասին:

23. Պատասխանատու եմ ֆիզիկական կամ այլ բնույթի փոխգործողությունների կառավարման հստակ, համապատասխան և մշակութային բազմազանությունը հաշվի առնող շրջանակներն իմանալու և սահմանելու համար:

24. Հաճախորդ(ներ)ի կամ հովանավոր(ներ)ի հետ չեմ հաստատում սիրային կամ սեռական որևէ հարաբերություն: Ես մշտապես կգիտակցեմ քոուչինգային հարաբերությանը բնորոշ մտերմության աստիճանը: Հակառակ դեպքում համապատասխան գործողություններ կձեռնարկեմ խնդրի լուծման կամ քոուչինգային հարաբերության չեղարկման ուղղությամբ:

Բաժին IV. Պատասխանատվություն հասարակության նկատմամբ

Որպես ՔՄՖ մասնագետ ես՝

25. Ձերծ եմ մնում խտրականությունից՝ բոլոր քայլերում դրսևորելով ազնիվ և անկողմնակալ մոտեցում, միաժամանակ հարգելով տեղական կանոնները և մշակութային նորմերը: Խտրականությունը ենթադրում է տարիքային, ռասայական, գենդերային ինքնարտահայտման, էթնիկ և ազգային պատկանելության, սեռական կողմնորոշման, կրոնական, առանձնահատուկ

կարիքների կամ զինվորական կարգավիճակի հիմքով խտրականությունը՝ չսահմանափակվելով նշվածներով:

26. Ընդունում և հարգում եմ այլոց ներդրումը և մտավոր սեփականությունը՝ պահանջելով սեփականության ճանաչում միայն իմ ստեղծածի նկատմամբ: Ես հասկանում եմ, որ այս սկզբունքի խախտման հետևանքով որևէ երրորդ կողմ կարող է ինձ իրավական պատասխանատվության ենթարկել:

27. Հետազոտություն իրականացնելիս և ամփոփիչ զեկույց կազմելիս աշխատում եմ ազնվորեն և գիտականորեն ընդունված չափանիշների, թեմային առնչվող կիրառելի ուղեցույցների ու իմ կարողությունների շրջանակներում:

28. Տեղյակ եմ իմ և հաճախորդներիս՝ հասարակության վրա գործած ազդեցությանը և հետևում եմ «անել լավ», այլ ոչ «խուսափել վատից» փիլիսոփայությանը:

5. ՔՄՖ մասնագետի կողմից էթիկայի կանոնների պահպանման երդում

Որպես ՔՄՖ մասնագետ, հետևելով ՔՄՖ էթիկայի կանոններով սահմանվող չափանիշներին, ես ընդունում և համաձայնում եմ կատարել օրենքով և էթիկայի կանոններով սահմանված պարտավորություններս հաճախորդ(ներ)իս, հովանավոր(ներ)իս, գործընկերներիս և հանրության առջև:
Եթե խախտեմ ՔՄՖ էթիկայի կանոնների որևէ դրույթ, ընդունում եմ, որ ՔՄՖ-ն կարող է իր հայեցողությամբ պատասխանատվություն պահանջել ինձնից այդ արարքի համար: Ես նաև համաձայն եմ, որ որևէ խախտման դեպքում ՔՄՖ-ի կողմից ինձ պատասխանատվության ենթարկելը գուցե ներառի պատժամիջոցներ, օրինակ՝ պարտադիր մասնակցություն քոուչինգի լրացուցիչ դասընթացների կամ այլ ուսումնառություն, ինչպես նաև ՔՄՖ անդամության դադարեցում և (կամ) ՔՄՖ որակազրկում:

Էթիկայի կանոնների խախտումների ուսումնասիրման գործընթացի մասին մանրամասն տեղեկությունները, ինչպես նաև բողոքի ներկայացման կարգը տե՛ս հետևյալ հղումով՝
coachingfederation.org/ethics

Ընդունվել է ՔՄՖ Տնօրենների համաշխարհային խորհրդի կողմից
2019 թվականի սեպտեմբերին

© 2021 Քոուչինգի միջազգային ֆեդերացիա

This translation of the ICF Code of Ethics was prepared by the ICF Armenia Chapter and published on March 25, 2024. Official translations of this document are accessible from the ICF website at coachingfederation.org

ICF
Armenia
Chapter